

ARDSHININVESTBANK
Close Joint Stock Company

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18-Ը ԱՊՐԻԼԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 Լ

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԶԱՇՎԱՊԱԶԱԿԱՆ ԶԱՇՎԵԿՇՈՒ
ԶԱՍԱՏԱՄԱՆ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՎՆԱՍՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ
ԴԻՄԱՑ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» և ՀՀ «Բանկերի և
բանկային գործունեության մասին» օրենքները «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական
ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2005 թվականի ֆինանսական
հաշվետվությունները, այդ թվում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2005 թվականի տարեկան
հաշվեկշիռը 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ համաձայն կից հավելվածների:

2. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2005 թվականի ֆինանսատնտեսական գործունեության
արդյունքում ստացված 2 269 247 561.20 (երկու միլիարդ երկու հարյուր վաթսուներեք միլիոն
երկու հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր վաթսուներեք դրամ քսան լումա) հայկական
դրամ գումար գուտ շահույթը (հարկերի վճարումից հետո մնացած) բաշխել հետևյալ կերպ՝

ա) պահուստային ֆոնդի (զխավոր պահուստի) մասհանում (սույն որոշման 2-րդ կետում
նշված գումարի 5 տոկոսի չափով)՝ 113 462 378.06 (մեկ հարյուր տասներեք միլիոն չորս հարյուր
վաթսուներկու հազար երեք հարյուր յոթանասունութ դրամ վեց լումա) հայկական դրամ.

բ) շահութաբաժիններ՝ 2 155 785 183.14 (երկու միլիարդ մեկ հարյուր հիսունհինգ միլիոն
յոթ հարյուր ութանասունհինգ հազար մեկ հարյուր ութանասուներեք դրամ տասնչորս լումա)
հայկական դրամ ըստ «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության
կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասերին (մասնակցության չափերին)
համամասնորեն:

3. «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2003-2004թթ.
գործունեության արդյունքներով չբաշխված 2 192 680 365.60 (երկու միլիարդ մեկ հարյուր
ինսուներկու միլիոն վեց հարյուր ութսուն հազար երեք հարյուր վաթսուներեք դրամ վաթսու
լումա) հայկական դրամ շահույթը որպես շահութաբաժիններ վճարել բաժնետերերին՝
«Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում
ունեցած բաժնեմասերին (մասնակցության չափերին) համամասնորեն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՐ

Կ. ՍԱՖԱՐՅԱՆ

Ստորագրվել է հարյուրի նախագահի կողմից
2006թ. ապրիլի 20-ին, ք. Երևան